ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

24.07.2020

Նիստին մասնակցում էին՝ Ս. Գապոյանը, Ա. Զանգեզուրյանը, Ա. Հովեյանը, Վ. Ավետիսյան
Գ. Դաշտոյանը, Ս. Ամիրխանյանը, Ա. Մարուխյանը, Ա. Յազերյանը, Մ. Մարինոսյանը,
Նիստը վարող՝ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյան
Նիստը արձանագրող՝ քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարինե Մանուկյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի հաստատման մասին:
2. Գավառ համայնքի 2020 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
   /զեկ. Տ. Բրսիկյան/
3. Պետական (համայնքային) սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին

   /զեկ. Ա. Գևորգյան/
4. Պետական (համայնքային) սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին
   /զեկ. Ա. Գևորգյան/
5. Գավառ համայնքի Բոշնաղյան փողոցի որոշակի հատվածում պետական (համայնքային) սեփականություն հանդիսացող հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրերի գործողության ժամկետները չերկարաձգելու մասին
   /զեկ. Ա. Գևորգյան/

6. Գույքի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին
   /զեկ. Ա. Գևորգյան/
7. Համայնքային գույքը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով միցույթների կազմակերպման համար մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին
   /զեկ. Ա. Գևորգյան/
8. Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիրը լուծելու եվ ոչ բնակելի տարածքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:
   /զեկ. Ա. Գևորգյան/
9. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին
   /զեկ. Ա. Բաղալյան/
10. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին
    /զեկ. Ա. Բաղալյան/

11. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին

/զեկ. Ա. Բաղալյան/

12. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը մրցութային կարգով օտարելու մասին

/զեկ. Ա. Բաղալյան/

13. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով ընդլայնելու մասին:

/զեկ. Ա. Բաղալյան/

14. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը անհատույց /մշտական/ օգտագործման տրամադրելու մասին:

/զեկ. Ա. Բաղալյան/

15. Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին:

/զեկ. Ա. Բոշյան/

16. ԳՔԿՍԲ-ԳՀԱՊՁԲ-20/04 ծածկագրով հայտարարված մրցույթը չկայացած համարելու մասին

/զեկ. Ա. Մարտիրոսյան/

Հարց 1.

ՈՐՈՇՈՒՄ 79. ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասի Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով

Գավառ համայնքի ավագանին միաձայն քվեարկությամբ որոշում է հաստատել նիստի օրակարգը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 2.

ՈՐՈՇՈՒՄ 80. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Ս. ԱՄԻՐԽԱՆՅԱՆԸ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 5) , 38-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 27-ի թիվ 867-Ն որոշման հիման վրա Գավառ համայնքի և Գեղարքունիքի մարզպետարանի միջև 2020 թվականի հուլիսի 15-ին կնքված այլ ընթացիկ դրամաշնորհի N 867-Ն-4 պայմանագիրը, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Գավառ համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Գավառ համայնքի 2020 թվականի բյուջեի եկամտային մասը՝ Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ տողը ավելացնել 142012 /մեկ հարյուր քառասուներկու հազար տասներկու/ ՀՀ դրամով

2) Ծախսային մասը՝ 10 բաժնի 7 խմբի 1 դասի /սոցիալական հատուկ արտոնություններ/ գործառնական դասակարգման 4267 /կենցաղային և հանրային սննդի նյութեր/ տնտեսագիտական հոդվածը ավելացնել 142012 /մեկ հարյուր քառասուներկու հազար տասներկու/ ՀՀ դրամով՝ COVID-19-ով պայմանավորված Գավառ համայնքում ինքնամեկուսացված 26 անձանց սննդամթերքով և սանիտարահիգիենիկ պարագաներով աջակցության համար:

3) 01 բաժնի 1 խմբի 1 դասի /օրենսդիր և գործադիր մարմիններ/ գործառնական դասակարգման 4111 /աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 700 000 /յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամով, որից՝ 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամը ավելացնել նույն գործառնական դասակարգման 4266 /առողջապահական և լաբորատոր նյութեր/ տնտեսագիտական հոդվածին՝ կորոնավիրուսի կանխարգելման նպատակով համապատասխան նյութեր ձեռք բերելու համար, իսկ 500 000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամը ավելացնել 01 բաժնի 6 խմբի 1 դասի /ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ/ գործառնական դասակարգման 4237 /ներկայացուցչական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածին:

4) 08 բաժնի 2 խմբի 3 դասի /մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ/ գործառնական դասակարգման 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 450 000 /չորս հարյուր հիսուն/ ՀՀ դրամով, որն ավելացնել 01 բաժնի 6 խմբի 1 դասի /ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ/ գործառնական

դասակարգման 5129 /այլ; մեքենաներ և սարքավորումներ/ տնտեսագիտական հոդվածին՝ գեներատոր և հորատիչձեռք բերելու համար, որն էլ նվիրատվության կարգով տրամադրել ՀՀ զինված ուժերին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 3

ՈՐՈՇՈՒՄ 81. ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. ԱՄԻՐԽԱՆՅԱՆԸ, Ս. ԳԱՊՈՅԱՆԸ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 48[1]-րդ և 60-րդ հոդվածներով, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ և 12-րդ մասերի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21) կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ քաղաքի Բունիաթյան փողոց թիվ 2 հասցեի հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրի գործողության ժամկետի երկարաձգման մասին կառուցապատող Հասմիկ Մուսոյանի դիմումը, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. 2040 թվականը ներառյալ օգտագործման ժամկետով երկարացնել Գավառ համայնքի և քաղաքացի Հասմիկ Մուսոյանի միջև 2007 թվականին կնքված Գավառ քաղաքի Բունիաթյան փողոց թիվ 2 հասցեում գտնվող 0.00053 հա /զրո ամբողջ հիսուներեք հարյուր հազարերորդական/հա մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրի գործողության ժամկետը:
2. Հողամասի տարեկան վճարի չափը թողնել անփոփոխ՝ 10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 4.

ՈՐՈՇՈՒՄ 82. ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 48[1]-րդ և 60-րդ հոդվածներով, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ և 12-րդ մասերի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21) կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ քաղաքի Բունիաթյան փողոց թիվ 10 հասցեի հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրի գործողության ժամկետի երկարաձգման մասին կառուցապատող Արա Ասոյանի դիմումը, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. 2040 թվականը ներառյալ օգտագործման ժամկետով երկարացնել Գավառ համայնքի և քաղաքացի Արա Ասոյանի միջև 2007 թվականին կնքված Գավառ քաղաքի Բունիաթյան փողոց թիվ 10 հասցեում գտնվող 0.00197հա /զրո ամբողջ հարյուր իննսունյոթ հարյուրհազարերորդական/ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրի գործողության ժամկետը:
2. Հողամասի տարեկան վճարի չափը թողնել անփոփոխ՝ 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (9) Դեմ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱԶԵՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 5.

ՈՐՈՇՈՒՄ 83. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՇՆԱՂՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՈՐՈՇԱԿԻ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՉԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա. ՄԱՐՈՒԽՅԱՆԸ, Ա. ՀՈՎԵՅԱՆԸ, Դ. ՄԱԶՄԱՆՅԱՆԸ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի 23-րդ, ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ և 12-րդ մաերի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3)

կետի, «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշման դրույթներով, նկատի ունենալով, որ համաձայն Գավառ քաղաքի գլխավոր հատակագծի, Բունիաթյան փողոցի «ՎՏԲ-Հայաստան բանկ»-ի շենքին հարող հարավային մայթը հանդիսանում է ընդհանուր օգտագործման կանաչ տարածք, հարում է հանրապետական նշանակության ավտոճանապարհին, ելնելով համայնքի կենտրոնական հատվածի քաղաքաշինական կանոնակարգման անհրաժեշտությունից, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1.«ՎՏԲ-Հայաստան բանկ»-ի շենքին հարող հարավային մայթին տեղադրված բոլոր ոչ հիմնական շինությունների զբաղեցրած տարածքները կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին պայմանագրերի գործողությունների ավարտից հետո չերկարաձգել այդ պայմանագրերի գործողության ժամկետները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 6.
ՈՐՈՇՈՒՄ 84. ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Դ. ՄԱՋՄԱՆՅԱՆԸ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ և 12-րդ մասերի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21) կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ քաղաքի Դաշտոյան փողոց թիվ 14 հասցեի գույքի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետի երկարաձգման մասին նշված գույքի վարձակալ Սեդա Խաչիկի Խեքոյանի դիմումը, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. 31.12.2030 թվականը ներառյալ օգտագործման ժամկետով երկարացնել Գավառ համայնքի և քաղաքացի Սեդա Խեքոյանի միջև 2012 թվականի մարտի 15-ին կնքված Գավառ քաղաքի Դաշտոյան փողոց թիվ 14 հասցեում գտնվող 31.1 /երեսունմեկ ամբողջ մեկ/ ք.մ. մակերեսով գույքի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը:
2. Գույքի տարեկան վարձավճարի չափը թողնել անփոփոխ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 7.

ՈՐՈՇՈՒՄ 85. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Ս. ԱՄԻՐԽԱՆՅԱՆԸ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ և 12-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասը, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Գուրգեն Մարտիրոսյան / Գավառ համայնքի ղեկավար/

Անդամներ՝ Մկրտիչ Մանուկյան /համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ/
Արծրուն Ղուրշուդյան /համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ/
Երեմ Զախարյան /համայնքապետարանի աշխատակից/
Արման Մարուխյան /Գավառ համայնքի ավագանու անդամ/
Վահե Հակոբյան /Գավառ համայնքի ավագանու անդամ/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո դադարեցնել նախկին հանձնաժողովի լիազորությունները:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱԶԵՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 8.
ՈՐՈՇՈՒՄ 86. ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Ս. ԱՄԻՐԽԱՆՅԱՆԸ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ և 12-րդ մասերի դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Լուծել Գավառ համայնքի և «Վ. Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպության միջև 2017 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիրը:
2. Գավառ համայնքի Զորավար Անդրանիկի փողոց թիվ 18 հասցեում գտնվող համայնքային սեփականությկուն հանդիսացող վարչական շենքի արևմտյան կենտրոնական մուտքից աջ, առաջին հարկի 309,2 /երեք հարյուր ինն ամբողջ երկու տասնորդական/ ք.մ. մակերեսով ոչ բնակելի տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, 5 /հինգ/ տարի օգտագործման ժամկետով տրամադրել «Վ. Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 9.
ՈՐՈՇՈՒՄ 87. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ Գավառ համայնքի Գետեռն Միքայելյան փողոց 5/2 հասցեում գտնվող Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0095-0010 կադաստրային ծածկագրով 0.03657հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության սահմանափակումներ չունեցող հողատարածքը՝ սաունա կառուցելու նպատակով, աճուրդային կարգով օտարելուն:

2. 05-001-0095-0010 կադաստրային ծածկագրով 0.03657հա մակերեսով հողատարածքի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը մեկ քառակուսի մետրի համար սահմանել 1242 /հազար երկու հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 10
ՈՐՈՇՈՒՄ 88. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Ս. ԳԱՊՈՅԱՆԸ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների դրույթներով, գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ Գավառ համայնքի Արամայիս Ոսկանյան փողոց 1/51 հասցեում գտնվող Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0294-0084 կադաստրային ծածկագրով 0.003հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, սահմանափակումներ չունեցող հողատարածքը՝ ավտոտնակ կառուցելու նպատակով, աճուրդային կարգով օտարելուն:
2. 05-001-0294-0084 կադաստրային ծածկագրով 0.003հա մակերեսով հողատարածքի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը մեկ քառակուսի մետրի համար սահմանել 1242 /հազար երկու հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 11.
ՈՐՈՇՈՒՄ 89. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Գետեոն Միքայելյան փողոց թիվ 5/1 հասցեում գտնվող /ծածկագիր 05-001-0095-0011/, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 0.01696հա մակերեսով, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողատարածքն ընդլայնելու նպատակով ուղղակի վաճառքով օտարելու Գավառ համայնքի Արծվաքար թաղամասի Գ. Միքայելյան փողոց 5 հասցեում գտնվող 05-001-0095-0008-001 կադաստրային ծածկագրով, բաղնիքի շենքի սեփականատեր Լիանուշ Արշավիրի Սուքիասյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 12.
ՈՐՈՇՈՒՄ 90. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ և 78-րդ հոդվածների, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի և 18-րդ հոդվածի 21) կետի դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ Գավառ համայնքի Նալբանդյան փողոց թիվ 1/1 հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0126-0008 կադաստրային ծածկագրով, 0.00198հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքն՝ կանաչապատման և ծառատնկման նպատակով, կառուցապատման իրավունքով, մրցութային կարգով 10 տարի օգտագործման ժամկետով տրամադրելուն:

2. 05-001-0126-0008 կադաստրային ծածկագրով 0.00198հա մակերեսով հողատարածքի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 15000 /տանհինգ հազար/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 13.
ՈՐՈՇՈՒՄ 91. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԸՆԴԼԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Դ. ՄԱՋՄԱՆՅԱՆԸ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածի «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության 12.05.2001թ. «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշման պահանջներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է
1. Համաձայնություն տալ Գավառ համայնքի Ազատության փողոց 12/42 հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող, 05-001-0316-0032 կադաստրային ծածկագրով, 0.002հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության սահմանափակումներ չունեցող հողատարածքն ընդլայնելու նպատակով տրամադրել Գավառ համայնքի բնակիչ Սեդիկ Խանդանյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 14
ՈՐՈՇՈՒՄ 92. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ /ՄՇՏԱԿԱՆ/ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Ա. ՄԱՐՈՒԽՅԱՆԸ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության 12.05.2001թ. «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշման պահանջներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ Գավառ համայնքի Բուռնազյան փողոց թիվ 18 հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող, 05-001-0376-0054 կադաստրային ծածկագրով զբոսայգու տարածքից 0,089հա մակերեսով սահմանափակումներ չունեցող հողատարածքն, «Թումոն ափի մեջ» ծրագիրն իրականացնելու նպատակով, անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրել Սիմոնյան կրթական հիմնադրամին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմաը հաջորդող օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 15.
ՈՐՈՇՈՒՄ 93. ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի 3 կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42) կետի դրույթներով, նկատի ունենալով, որ ներքոհիշյալ քաղաքացիները վճարել են գույքահարկի մայր գումարները, *Գավառ համայնքի ավագանին որոշում է*

1. Ձիջել նրանց գույքահարկի և հողի հարկի գծով տույժերը /հավելված 1, 2/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 16.

ՈՐՈՇՈՒՄ 94. ԳՔԿՍԲ-ԳՀԱՊՁԲ-20/04 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ և 12-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «ԳՆումների գործընթացի կազմակերպման» կարգի 58-րդ կետը, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. 2020 թվականի հունիսի 29-ին «Գավառ քաղաքային համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից ԳՔԿՍԲ-ԳՀԱՊՁԲ-20/04 ծածկագրով հայտարարված մրցույթը հայտարարել չկայացած:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրը:

Կողմ՝ (9) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ